

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»

ԻԱՄ խորհրդի

20/12/2012թ թիվ 19-Լ որոշմամբ

16/07/2013 թ թիվ 31-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»

ԻԱՄ խորհրդի նախագահ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

(վերջին փոփոխությունը գրանցված է)

ՀՀ կենտրոնական բանկում

«20» օգոստոսի 2013թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Զավադյան

_____ Ներսես Երիցյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-040

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԲՈՆՈՒՄ-
ՄԱԼՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ)

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են՝

1) Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման ժամանակ կիրառվող Բոնուս-Մալուս համակարգի կառուցվածքը և դրա կիրառման կարգը,

2) Բոնուս-Մալուս համակարգի դասերը, յուրաքանչյուր Բոնուս-Մալուս դասին համապատասխանող գործակիցները, Բոնուս-Մալուս դասի ստացման և դասից դաս անցման կանոնները,

3) Բոնուս-Մալուս համակարգի կիրառման շրջանակներում ապահովագրական պատմությունը հաշվի առնելու կարգը:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **լիազորված տիրապետող՝** ԱՊՊԱ պայմանագրով որպես լիազորված տիրապետող նշված ցանկացած անձ (ներառյալ՝ ապահովադիրը, եթե վերջինս հանդիսանում է նաև լիազորված տիրապետող),

2) **դիտարկվող ժամանակահատված՝** ԱՊՊԱ պայմանագրի (տվյալ անձին որպես լիազորված տիրապետող ավելացնելու վերաբերյալ համաձայնագրի) կնքմանը նախորդող՝ սույն կանոններով սահմանված որոշակի ժամանակահատված,

3) **ապահովագրական պատմություն՝** Տեղեկատվական համակարգում առկա՝ պայմանագրային օրերի և ապահովագրական պատահարների վերաբերյալ տեղեկատվություն,

4) **Բոնուս-Մալուս դաս (այսուհետ նաև՝ ԲՄ դաս)՝** լիազորված տիրապետողին տրվող, իսկ անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի դեպքում՝ ապահովագրավճարի հաշվարկման ժամանակ կիրառվող դաս, որին համապատասխանող գործակիցն օգտագործվում է ապահովագրական ընկերության կողմից ապահովագրավճարը հաշվարկելիս,

5) **բազիսային դաս՝** Բոնուս-Մալուս դաս, որին համապատասխանող գործակցի մեծությունը հավասար է 1 միավորի, ինչը նշանակում է, որ այս դասում գտնվող ապահովադիրը չունի ո՛չ բոնուս, ո՛չ մալուս (ԲՄ դաս 10),

6) **բոնուս՝** ապահովագրավճարին տրվող զեղչի մեծություն,

6.1) **բոնուսային դաս՝** ԲՄ 1-ից մինչև 9-րդ դասեր,

7) **մալուս՝** ապահովագրավճարին տրվող հավելավճարի մեծություն,

7.1) **մալուսային դաս՝** ԲՄ 11-ից մինչև 22-րդ դասեր,

8) **դասից դաս անցում՝** լիազորված տիրապետողի դասի փոփոխություն՝ կախված վերջինիս ապահովագրական պատմությունից,

9) **պայմանագրային օրեր**՝ այն բոլոր օրացուցային օրերի հանրագումարը, որոնց ընթացքում լիազորված տիրապետողը որպես այդպիսին նշված է եղել գործող ԱՊՊԱ պայմանագրերում: Ընդ որում, եթե լիազորված տիրապետողը նույն օրը որպես այդպիսին նշված է եղել երկու և ավելի գործող ԱՊՊԱ պայմանագրերում, ապա այդ օրը համարվում է մեկ պայմանագրային օր,

10) **ապահովագրական ընկերություն**՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերություն,

11) **Բյուրո**՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

12) **Օրենք**՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

3. Սույն կանոնների իմաստով հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու որոշման ընդունման օր է համարվում տվյալ տեղեկատվությունը ապահովագրական ընկերության (Բյուրոյի) կողմից Տեղեկատվական համակարգ մուտքագրման օրը, բացառությամբ սույն կանոնների 18-րդ կետով սահմանված դեպքերի: Սույն կանոնների 18-րդ կետով սահմանված այն դեպքերում, երբ հաշվի են առնվել Տեղեկատվական համակարգ չմուտքագրված հատուցման որոշումները, այդ որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը հետագայում Տեղեկատվական համակարգ մուտքագրվելու դեպքում դրանք համապատասխանաբար տվյալ լիազորված տիրապետողի կամ անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի հաջորդ հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում:

4. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2

ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԱՍԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ԴԱՍԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ, ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ԴԱՍԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԻՑ ԴԱՍ ԱՆՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

5. ԲՄ համակարգի դասերը, այդ դասերին համապատասխանող գործակիցները սահմանվում են սույն կանոնների Հավելված 1-ով: Դաս 22-ը համարվում է ԲՄ համակարգի առավելագույն մալուսային դասը, իսկ դաս 1-ը՝ առավելագույն բոնուսային դասը: Առավելագույն մալուսային դասի նկատմամբ հավելյալ մալուս, իսկ առավելագույն բոնուսային դասի նկատմամբ հավելյալ բոնուս չի կիրառվում: Սույն կանոնների հիման վրա տրվող բոնուսները և մալուսները հաշվարկվում են լիազորված տիրապետողի (անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի դեպքում՝ տվյալ ապահովագրի՝ նախորդ անգամ կնքած անսահմանափակ լիազորված տիրապետողներով

ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառված) ԲՄ դասի նկատմամբ, կամ սույն կանոններով սահմանված դեպքերում՝ բազիսային դասի նկատմամբ:

6. ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս տվյալ ԱՊՊԱ պայմանագրում նշված յուրաքանչյուր լիազորված տիրապետողի համար կիրառվող ԲՄ դասը որոշվում է լիազորված տիրապետողի ապահովագրական պատմության հիման վրա:

7. Լիազորված տիրապետողի ԲՄ դասի որոշման համար դիտարկվող ժամանակահատված է համարվում տվյալ լիազորված տիրապետողի ԲՄ դասը նախորդ անգամ փոխելու օրվանից սկսած մինչև տվյալ ԱՊՊԱ պայմանագրի (տվյալ անձին որպես լիազորված տիրապետող ավելացնելու վերաբերյալ համաձայնագրի) կնքմանը նախորդող օրը ներառյալ: Ընդ որում, եթե լիազորված տիրապետողը 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո մինչև տվյալ պայմանագրի կնքման օրվան նախորդող օրը չի ունեցել ԲՄ դասի փոփոխություն, ապա սույն կետի իմաստով լիազորված տիրապետողի ԲՄ դասի փոփոխման օր է համարվում 2013 թվականի հունվարի 1-ը:

8. Յուրաքանչյուր ԱՊՊԱ պատահարի համար, որի առնչությամբ դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) լիազորված տիրապետողի՝ որպես վնասը պատճառած անձի պատասխանատվությունից բխող հատուցում վճարելու վերաբերյալ որոշում (որոշումներ) է կայացրել, լիազորված տիրապետողը ստանում է մալուս՝ չորս դասի չափով: Լիազորված տիրապետողը չի ստանում սույն կետով նախատեսված մալուսը, եթե նա արդեն իսկ տվյալ ԱՊՊԱ պատահարի համար ստացել է մալուս:

9. Լիազորված տիրապետողը ստանում է բոնուս՝ մեկ դասի չափով, այն դեպքում, երբ դիտարկվող ժամանակահատվածում առկա է առնվազն 345 պայմանագրային օր, որոնց ընթացքում տվյալ անձը հանդիսացել է լիազորված տիրապետող, և դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում տվյալ լիազորված տիրապետողի՝ որպես վնասը պատճառած անձի պատասխանատվությունից բխող հատուցում վճարելու վերաբերյալ որոշում չի ընդունվել:

10. Սույն կանոնների 8-րդ և 9-րդ կետերով սահմանված հանգամանքների բացակայության դեպքում ԲՄ դաս չունեցող լիազորված տիրապետողը ստանում է բազիսային դաս, իսկ եթե լիազորված տիրապետողն արդեն ունի ԲՄ դաս, ապա դասի փոփոխություն տեղի չի ունենում:

11. Ապահովագրական ընկերությունը երկու և ավելի լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրավճարը հաշվարկելիս նախ սահմանված կարգով հաշվարկում է ապահովագրավճարի չափը ԱՊՊԱ պայմանագրում նշված յուրաքանչյուր լիազորված տիրապետողի համար առանձին և ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրավճարի չափ է համարում կատարված հաշվարկների արդյունքում ստացված ապահովագրավճարներից առավելագույնը:

12. Անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի որոշման համար դիտարկվող ժամանակահատված է համարվում տվյալ ապահովագրի կողմից կնքված անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրերի գծով ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի նախորդ փոփոխության

օրվանից սկսած մինչև տվյալ ԱՊՊԱ պայմանագրի (անսահմանափակ թվով լիազորված տիրապետողների վերաբերյալ համաձայնագրի) կնքմանը նախորդող օրը ներառյալ: Ընդ որում, եթե անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիր կնքող ապահովադիրը (անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման մասով) 2012 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև տվյալ պայմանագրի կնքման օրվան նախորդող օրը չի ունեցել ԲՄ դասի փոփոխություն, ապա սույն կետի իմաստով անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի դեպքում՝ ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի փոփոխման օր է համարվում 2013 թվականի հունվարի 1-ը:

13. Յուրաքանչյուր ԱՊՊԱ պատահարի համար, որի առնչությամբ դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում ապահովագրական ընկերությունը տվյալ ապահովադրի կողմից կնքված անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրերում նշված ավտոտրանսպորտային միջոցներով պատճառված վնասի գծով հատուցում վճարելու վերաբերյալ որոշում (որոշումներ) է կայացրել, նրա կողմից անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով նոր ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասը բարձրանում է (կիրառվում է մալուս)՝ չորս դասի չափով: Ընդ որում, եթե սույն կետով սահմանված որոշումները կայացվել են սույն կետով սահմանված երկու և ավելի ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ, ապա ապահովագրավճարի հաշվարկի համար կիրառվող ԲՄ դասի հաշվարկի համար հիմք են ընդունվում միայն սույն կետով սահմանված առավելագույն պատահարներ ունեցող ավտոտրանսպորտային միջոցի մասնակցությամբ տեղի ունեցած պատահարները: Սույն կետով նախատեսված մալուսը չի կիրառվում, եթե տվյալ ԱՊՊԱ պատահարի առնչությամբ արդեն իսկ կիրառվել է մալուս:

14. Անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասը իջնում է (կիրառվում է բռնուս)՝ մեկ դասի չափով (որը հաշվարկվում է դիտարկվող ժամանակահատվածի սկզբի դրությամբ տվյալ ապահովադրի կողմից կնքված անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի ԲՄ դասի նկատմամբ), եթե դիտարկվող ժամանակահատվածում տվյալ ապահովադիրն ունեցել է անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով գործող ԱՊՊԱ պայմանագրեր առնվազն 345 օրացուցային օր հանրագումարով և դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում այդ պայմանագրերով նշված ավտոտրանսպորտային միջոցներով պատճառված վնասի գծով հատուցում վճարելու վերաբերյալ որոշում չի կայացվել:

15. Եթե անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիր կնքող ապահովադիրը նախկինում չի ունեցել կնքված անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիր, ապա ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվում է բազիսային դասը: Սույն կանոնների 13-րդ և 14-րդ կետերով սահմանված հանգամանքների բացակայության դեպքում անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիր կնքող ապահովադրի ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվում է բազիսային դասը, իսկ եթե տվյալ ապահովադիրն արդեն տրվել է ԲՄ դաս, ապա դասի փոփոխություն տեղի չի ունենում:

16. Ապահովագրական ընկերությունը ապահովագրավճարների հաշվարկման նպատակով՝ նախքան ԱՊՊԱ վկայագրի համապատասխան դաշտերը լրացնելը, հարցում է կատարում Տեղեկատվական համակարգ՝ ԱՊՊԱ պայմանագրերի կնքման համար անհրաժեշտ ԲՄ դասերի վերաբերյալ սահմանված տեղեկատվությունը ստանալու համար:

17. Ապահովագրական ընկերությունը սույն կանոնների 16-րդ կետով սահմանված տեղեկատվության հիման վրա սույն կանոններով սահմանված կարգով կատարում է համապատասխան ԲՄ գործակիցների հաշվարկ:

18. Ապահովագրական պատմության վերաբերյալ Տեղեկատվական համակարգում առկա տվյալները համարվում են հավաստի, քանի դեռ փաստաթղթերով այլ բան չի ապացուցվել: Փաստաթղթերով այլ բան ապացուցվելու դեպքում հիմք են ընդունվում փաստաթղթերով ապացուցված փաստերը:

19. Լիազորված տիրապետողը պահպանում է իր ԲՄ (և բոնուսային, և մալուսային) դասը ինչպես ավտոտրանսպորտային միջոցը, այնպես էլ ապահովագրական ընկերությունը փոխելու դեպքում:

20. Սույն կանոնների 14-րդ, 20.2-րդ, 24-րդ և 25-րդ կետերով նախատեսված դեպքերում, եթե ապահովագիրը նույն օրը ունեցել է անսահմանափակ լիազորված տիրապետողներով երկու և ավելի ԱՊՊԱ պայմանագրեր, ապա այդ օրը համարվում է մեկ օրացուցային օր:

20.1. Եթե լիազորված տիրապետողն ԱՊՊԱ պայմանագրի կնքման օրվան նախորդող առնվազն 4 տարիների ընթացքում ունեցել է առնվազն 1380 պայմանագրային օր, այդ տարիների ընթացքում տվյալ լիազորված տիրապետողի՝ որպես վնասը պատճառած անձի պատասխանատվությունից բխող հատուցում վճարելու վերաբերյալ որոշում չի ընդունվել և վերջինս ունի մալուսային դաս, ապա այդ լիազորված տիրապետողին տրվում է բազիսային դաս:

20.2. Եթե անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիր կնքող ապահովագիրը այդ պայմանագրի կնքման օրվան նախորդող առնվազն 4 տարիների ընթացքում ունեցել է անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով գործող ԱՊՊԱ պայմանագրեր առնվազն 1380 օրացուցային օր հանրագումարով, այդ տարիների ընթացքում տվյալ ապահովագրի կողմից կնքված անսահմանափակ լիազորված տիրապետողներով որևէ ԱՊՊԱ պայմանագրում նշված որևէ ավտոտրանսպորտային միջոցով պատճառված վնասի գծով հատուցում վճարելու վերաբերյալ որոշում չի կայացվել և տվյալ ապահովագրի վերջին անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիրը կնքվել է մալուսային դասով, ապա անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիր կնքող ապահովագրի ԱՊՊԱ պայմանագիրը կնքվում է բազիսային դասով:

ԳԼՈՒԽ 2

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Սույն կանոններն ուժի մեջ են մտնում 2013 թվականի հունվարի 1-ին:

22. 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո կնքվող և 2013 թվականին ուժի մեջ մտնող ԱՊՊԱ պայմանագրերով առաջին անգամ որպես լիազորված տիրապետող նշվող անձի համար դիտարկվող ժամանակահատված է համարվում 2013 թվականի հունվարի 1-

ին նախորդող 270 օրացուցային օրը: Սույն կետով նշված ժամանակահատվածում առնվազն մեկ պայմանագրային օր ունեցող լիազորված տիրապետողը նույն ժամանակահատվածում սույն կանոնների 8-րդ կետով սահմանված որոշումների բացակայության դեպքում ստանում է բռնուժ՝ մեկ դասի չափով, որը հաշվարկվում է բազիսային դասի նկատմամբ: Ընդ որում, սույն կետի դրույթների հիման վրա ԲՄ դասը փոխվելու դեպքում տվյալ լիազորված տիրապետողի ԲՄ դասի փոփոխման օր է համարվում 2013 թվականի հունվարի 1-ը:

23. 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո կնքվող և 2013 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտնող ԱՊՊԱ պայմանագրերով առաջին անգամ որպես լիազորված տիրապետող նշվող անձի համար դիտարկվող ժամանակահատված է համարվում 2013 թվականի հունվարի 1-ից սկսած մինչև տվյալ ԱՊՊԱ պայմանագրի կնքման օրվան նախորդող օրը: Ընդ որում, սույն կետով նախատեսված դեպքում լիազորված տիրապետողը ստանում է.

1) բռնուժ՝ մեկ դասի չափով, եթե առկա են սույն կանոնների 22-րդ կետով սահմանված պայմանները (բացառությամբ ԱՊՊԱ պայմանագրի ուժի մեջ մտնելուն վերաբերող պայմանի) և այդ անձը սույն կանոնների 22-րդ կետի հիման վրա արդեն իսկ չի ստացել բռնուժ, և

2) բռնուժ՝ մեկ դասի չափով, եթե տվյալ լիազորված տիրապետողը դիտարկվող ժամանակահատվածում ունի առնվազն 345 պայմանագրային օրեր, այդ ժամանակահատվածում նրա վերաբերյալ չի ընդունվել սույն կանոնների 8-րդ կետով սահմանված որևէ որոշում, և

3) մալու՝ սույն կանոնների 8-րդ կետով սահմանված չափով՝ սույն կանոնների 8-րդ կետով սահմանված այն որոշումների համար, որոնք ընդունվել են 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո տեղի ունեցած պատահարների առնչությամբ:

24. 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո տվյալ ապահովագրի կողմից առաջին անգամ կնքվող և 2013 թվականի ընթացքում ուժի մեջ մտնող՝ անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի որոշման համար դիտարկվող ժամանակահատված է համարվում 2013 թվականի հունվարի 1-ին նախորդող 270 օրացուցային օրը: Սույն կետով նշված ժամանակահատվածում անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրեր ունեցող և այդ պայմանագրերում նշված ավտոտրանսպորտային միջոցներով պատճառված վնասների գծով սույն կանոնների 13-րդ կետով սահմանված որոշումներ չունեցող ապահովագրի կողմից կնքվող անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասը որոշվում է՝ ԲՄ բազիսային դասի նկատմամբ հաշվարկվելով բռնուժ՝ մեկ դասի չափով: Ընդ որում, սույն կետի դրույթների հիման վրա ԲՄ դասը փոխվելու դեպքում ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի փոփոխման օր է համարվում 2013 թվականի հունվարի 1-ը:

25. 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո տվյալ ապահովագրի կողմից առաջին անգամ կնքվող և 2013 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտնող՝ անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի որոշման համար

դիտարկվող ժամանակահատված է համարվում 2013 թվականի հունվարի 1-ից սկսած մինչև տվյալ ԱՊՊԱ պայմանագրի կնքման օրվան նախորդող օրը: Ընդ որում, անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի նկատմամբ կիրառվում է.

1) բռնուս՝ մեկ դասի չափով, եթե առկա են սույն կանոնների 24-րդ կետով սահմանված պայմանները (բացառությամբ ԱՊՊԱ պայմանագրի ուժի մեջ մտնելուն վերաբերող պայմանի) և տվյալ ապահովագրի կողմից նախկինում կնքված անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող ԲՄ դասի նկատմամբ սույն կանոնների 24-րդ կետի հիման վրա արդեն իսկ չի հաշվարկվել բռնուս, և

2) բռնուս՝ մեկ դասի չափով, եթե տվյալ ապահովագրի դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում ունի առնվազն 345 օրացուցային օր հանրագումարով գործող անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրեր և դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում գործող՝ տվյալ ապահովագրի կողմից կնքված որևէ անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրերում նշված ավտոտրանսպորտային միջոցներով պատճառված վնասների գծով չի ընդունվել սույն կանոնների 13-րդ կետով սահմանված որևէ որոշում, և

3) մալուս՝ սույն կանոնների 13-րդ կետով սահմանված չափով՝ սույն կանոնների 13-րդ կետով սահմանված այն որոշումների համար, որոնք ընդունվել են 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո տեղի ունեցած պատահարների առնչությամբ:

26. Սույն կանոնների 23-րդ և 25-րդ կետերով սահմանված բռնուսները և մալուսները հաշվարկվում են բազիսային դասի, իսկ ԲՄ դասի առկայության դեպքում՝ առկա ԲՄ դասի նկատմամբ:

27. Սույն կանոնների 22-րդ և 24-րդ կետերով նախատեսված դիտարկվող ժամանակահատվածներում տեղի ունեցած պատահարների առնչությամբ ընդունված հատուցում վճարելու վերաբերյալ որոշումները չեն ընդգրկվում մալուսի հաշվարկում՝ անկախ այդ որոշումները կայացվելու և Տեղեկատվական համակարգ մուտքագրվելու ամսաթվից:

28. Այն դեպքերում, երբ ապահովագրական շուկայում տեղի են ունեցել էական փոփոխություններ, կամ վտանգված են ԱՊՊԱ համակարգի կայունությունը և շարունակականությունը, որի հիման վրա անհրաժեշտ է սահմանել ԲՄ նոր դասեր, ԲՄ գործակիցների նոր մեծություններ և (կամ) դասից դաս անցման նոր կանոններ, ապա Բյուրոյի խորհուրդը ողջամիտ ժամկետում սահմանում է ԲՄ նոր դասեր, ԲՄ գործակիցների նոր մեծություններ և (կամ) ԲՄ դասից դաս անցման նոր կանոններ:

29. Բռնուս-Մալուս համակարգի՝ 30 դաս պարունակող դասային համակարգի շրջանակներում տրված դաս 16-ը և դաս 15-ը Բռնուս-Մալուս համակարգի՝ 22 դաս պարունակող դասային համակարգի շրջանակներում համարվում են համապատասխանաբար դաս 10-ը և դաս 9-ը:

Հավելված 1

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման ժամանակ Բոնուս-Մալուս համակարգի կիրառման» կանոնների

Բոնուս-Մալուս համակարգի դասերը, դրանց համապատասխանող գործակիցները

ԲՄ դասեր	Գործակցի մեծությունը (%-ային արտահայտությամբ)
դաս 22	200%
դաս 21	180%
դաս 20	160%
դաս 19	152%
դաս 18	144%
դաս 17	136%
դաս 16	128%
դաս 15	120%
դաս 14	116%
դաս 13	112%
դաս 12	108%
դաս 11	104%
դաս 10	100%
դաս 9	97%
դաս 8	94%
դաս 7	91%
դաս 6	88%
դաս 5	85%
դաս 4	82%
դաս 3	75%
դաս 2	65%
դաս 1	50%